ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 002-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի և 83-րդ հոդվածի պահանջներով, և համաձայն Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Արենի համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն.

1) մուտքային մասով՝ 791079801 ՀՀ դրամ, որից՝

ա) սեփական մուտքեր՝ 189189000 ՀՀ դրամ,

բ) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ՝ 427718500 ՀՀ դրամ,

գ) պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ 653700 ՀՀ դրամ,

դ) կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ /սուբվենցիաներ/ 106626400 ՀՀ դրամ,

2) ծախսային մասով՝ 791079801 ՀՀ դրամ,

3) Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝

ա) վարչական մաս՝ 20786375 ՀՀ դրամ, որը ամբողջությամբ հատկացնել ֆոնդային բյուջե,

բ) ֆոնդային մաս՝ 26105826 ՀՀ դրամ,

4) Անշարժ գույքի օտարումից մուտքեր՝ 20 000 000 ՀՀ դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3:

5. Հաստատել բյուջեի տարեսկզբի հավելուրդը կամ պակասուրդը՝ հատված 4:

6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5:

7. Սահմանել որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները և թույլատրել Արենի համայնքի ղեկավարին.

ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգման նախատեսված հոդվածների միջև <<ՀՀ Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան կատարել վերաբաշխումներ, որոնք չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 10%-ը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ